

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

10 հունիսի 2006 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2006 թվականի N 750-Ն

#### **667** ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ԽԱՆՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի N 419-Ն որոշման<sup>2</sup>՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. հունիսի 7  
Երևան

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄԻ ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ԵՎ  
ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱՎ՝ ԽԱԽՍՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ

### I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՐՄԵ

1. Սույն՝ հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգով (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) սահմանված են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները, խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների ու հետագա օգտագործման տեսակների ելնելով դրանց պիտանիությունից:

2. Սույն տեխնիկական կանոնակարգը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

### II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝ **հողի բերրի շերտ**՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով:

**հողի բերրիություն**՝ սնուցման տարրերի խոնավության ու օդի նկատմամբ բույսերի պահանջը բավարարող և դրանց բնական կենսագործունեության պայմաններն ապահովող հողի ունակություն:

**հնարավոր բերրի ապարներ**՝ բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ:

**քիչ պիտանի ապարներ**՝ բուսականության աճի համար անբարենպաստ քիմիական և (կամ) ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ:

**ոչ պիտանի ապարներ**՝ լեռնային ապարներ, որոնց հատիկաչափական կազմն ու քիմիական և (կամ) ֆիզիկական հատկությունները խոչընդոտում են բուսականության աճին և զարգացմանը:

**մելիորացիա (հողաբարելավում)**՝ միջոցառումների համալիր՝ ուղղված բուսականության աճը խոչընդոտող լցակույտերի մակերևութային շերտում ապարների հատկությունների բարելավմանը և հետագայում ապարների բերրիության ու գյուղատնտեսական նշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:

**հողերի պահպանություն**՝ հողերի բերրիության նվազեցման, դրանց ոչ արդյունավետ օգտագործման և աղտոտման կանխարգելման կամ նվազեցման միջոցառումների համակարգ:

**խախտված հողերի դասակարգում**՝ խախտված հողերի տարաբաժանման համակարգ՝ ըստ՝

ա) ռեկուլտիվացման ուղղությունների և հետագա օգտագործման տեսակների համաձայն N 1 աղյուսակի:

բ) տեխնածին ռելիեֆի համաձայն N 2 աղյուսակի.

գ) կենսաբանական ռեկուլտիվացման համար մակաբացման և պարփակող ապար-  
ների համաձայն N 3 աղյուսակի.

**հողի արդյունավետ օգտագործում**՝ հողերի տնտեսապես, էկոլոգիապես և սոցիա-  
լապես հիմնավորված օգտագործում.

**խախտված հողեր**՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջա-  
վայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

**ռեկուլտիվացում**՝ խախտված հողերի վերականգնման (օգտագործման համար  
պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որն իրականացվում է 2 փուլով՝  
տեխնիկական և կենսաբանական.

**հողերի կենսաբանական ռեկուլտիվացման փուլ**՝ խախտված հողերի բերրիության  
վերականգնման ագրոքիմիական և ֆիտոմեխորատիվ միջոցառումների համալիր.

**կենսաբանական ռեկուլտիվացման համար լեռնային ապարների դասակարգում**՝  
կենսաբանական ռեկուլտիվացիայի համար մակաբացման և պարփակող ապարների  
համակարգում (սխտեմավորում)՝ ըստ պիտանիության, հաշվի առնելով բուսահողային  
հատկությունները.

**հողերի տեխնիկական ռեկուլտիվացման փուլ**՝ խախտված հողերի նախապատ-  
րաստումը հետագա նպատակային օգտագործման համար՝ հատակագծման, թեքու-  
թյունների ձևավորման, հողի ու բերրի ապարների համան, տեղափոխման ու ռեկուլ-  
տիվացվող հողերի վրա դրանց տեղադրման, ճանապարհների ու հիդրոտեխնիկական  
կառույցների շինարարության միջոցով և այլն.

**ռեկուլտիվացվող շերտ**՝ ռեկուլտիվացման տեխնիկական փուլում կենսաբանա-  
կան ռեկուլտիվացման համար բարենպաստ պայմաններով հատուկ ստեղծվող բուսա-  
հողի վերին շերտ.

**թեքությունների (շեպերի) հարթեցում**՝ լցակույտերի և հանքային փորվածքների  
կողերի թեքությունների (շեպերի) անկյունների պակասեցման նպատակով կատարվող  
հողային աշխատանքներ.

**հողի էրոզիա**՝ քամու և ջրի ներգործության արդյունքում հողի առավելագույն բեր-  
րի՝ վերին հորիզոնների քայքայում և հանում.

**հողի աղտոտում**՝ մարդու գործունեության արդյունքում՝ հողում վտանգավոր ու  
թունավոր նյութերի և օրգանիզմների այնպիսի քանակության կուտակում, որն առաջաց-  
նում է հողերի դեգրադացիա կամ հողային ծածկույթի կառուցվածքի ու ձևաբանության  
փոփոխություն, հողի ֆիզիկաքիմիական հատկությունների վատթարացում, հողի բեր-  
րիության, աճեցվող մշակաբույսերի տեխնոլոգիական, սննդային, սանիտարահիգիենիկ  
արժեքների ու հողի հետ կապ ունեցող այլ բնական օբյեկտների որակի նվազեցում.

**ջրային հողեր**՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված  
ջրային հողեր.

**օգտակար հանածոյի հանքավայր**՝ ընդերքի տեղամաս, որը պարունակում է օգ-  
տակար հանածոյի պաշարներ ու կանխատեսումային ռեսուրսներ և ստացել է երկրա-  
բանատնտեսագիտական գնահատական.

**հողերի կոպիտ հարթեցում**՝ հողային աշխատանքների հիմնական ծավալի կա-  
տարմամբ հողի մակերեսի նախնական հարթեցում.

**հողերի հարթեցում**՝ խախտված հողերի մակերեսի հարթեցում, հանքերի լանջերի,  
լցակույտերի և կողերի թեքությունների մեղմում կամ անկյունների պակասեցում՝  
դրանց հետագա օգտագործմանը համապատասխան.

**հողերի մաքուր հարթեցում**՝ հողային աշխատանքների աննշան ծավալների դեպ-  
քում հողի մակերեսի վերջնական հարթեցում և միկրոռելիեֆի ուղղում.

**մակաբացման ապարներ**՝ բաց եղանակով լեռնային աշխատանքների իրականաց-

ման ընթացքում, որպես լցակույտային գրունտ, հանման և տեղափոխման ենթակա օգտակար հանածո ծածկող կամ պարփակող լեռնային ապարներ.

**պարփակող լեռնային ապարներ՝** օգտակար հանածո պարունակող մակաբացմաճ ապարներ.

**լցակույտային գրունտ՝** հանման, տեղափոխման և լցակույտի գոյացման պրոցեսներում փխրեցված և քիչ թե շատ միախառնված լցակույտ կազմող լեռնային ապարներ

**հանքային փորվածք՝** բաց եղանակով արդյունահանման արդյունքում գոյացած պինդ օգտակար հանածոների լեռնային փորվածքների ամբողջություն՝ ներքին լցակույտերով կամ առանց դրանց.

**լցակույտ՝** լցակույտային գրունտներից, ոչ կոնդիցիոն օգտակար հանածոներից օգտակար հանածոներից, արդյունաբերական ու կենցաղային թափոններից գոյացած արհեստական հողաթումբ.

**արտաքին լցակույտ՝** հանքի եզրագծից դուրս փխրուն լեռնային ապարների տեղադրման արդյունքում գոյացած լցակույտ.

**ներքին լցակույտ՝** հանքի տարածքում փխրուն լեռնային ապարների տեղադրման արդյունքում գոյացած լցակույտ.

**հանքահորային լցակույտ՝** ստորգետնյա մշակման ընթացքում դուրս բերվող դատարկ լեռնային ապարների թափման արդյունքում առաջացած լցակույտ.

**ճկվածք՝** առանց հոծության պատռվածքի հողի մակերեսի իջեցման արդյունքում առաջացած ճկված տեղամաս, որը պայմանավորված է ստորգետնյա լեռնային փորվածքների կամ լցակույտերում լիցքային ապարների պնդեցման ազդեցությամբ.

**շինարարական հրապարակներ՝** հիմնական կառույցների շինարարությունն սպասարկող տարածքներ.

**տեխնածին ռելիեֆ՝** արտադրական պրոցեսների արդյունքում ստեղծված ռելիեֆ:

**III. ԽԱՒՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ԵՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

4. Ռեկուլտիվացման ենթակա են բոլոր կատեգորիաների հողերը, ինչպես նաև դրանց հարակից տարածքները, որոնք խախտված հողերի բացասական ներգործության հետևանքով լրիվ կամ մասնակիորեն կորցրել են կամ կարող են կորցնել իրենց արդյունավետությունը:

5. Խախտված հողերի ռեկուլտիվացվող աշխատանքների նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները՝

- ա) տեղանքի բնական պայմանները (կլիմայական, լեռնակազմական, երկրաբանական, հիդրոլոգիական, վեգետացիոն).
- բ) խախտված (խախտվող) տեղամասերի տեղադիրքը.
- գ) շահագործման ենթակա տեղանքի զարգացման հեռանկարները.
- դ) ռեկուլտիվացման պահին խախտված հողերի փաստացի կամ կանխատեսվող վիճակը (մակերեսը, տեխնածին ռելիեֆի ձևը, բնական ներածի աստիճանը, խախտված հողերի ժամանակակից և հեռանկարային օգտագործումը, հողի բերրի շերտի ու հավանական բերրի ապարների առկայությունը, ստորերկրյա ջրերի հորիզոնի, ողողատների, չորացման ու ողողամշման (էրոզիոն) գործոնների կանխատեսումները, հողի աղտոտման աստիճանը)՝ համաձայն NN 2 և 3 աղյուսակների.
- ե) հողի քիմիական և գրանուլոմետրիկ ցուցանիշները, ագրոքիմիական և ագրոֆիզիկական հատկությունները, մակաբացման ու օգտակար հանածո պարունակող ապարների և լցակույտերում դրանց խառնուրդների ինժեներաերկրաբանական բնութագրերը՝ համաձայն N 3 աղյուսակի.
- զ) խախտված հողերի տեղակայման շրջանի տնտեսական, սոցիալական և սանի-

տարահիփօղի ենիկ պայմանները,

է) ռեկուլտիվացված հողերի օգտագործման ժամկետը՝ հաշվի առնելով կրկնակի խախտումների հնարավորությունը.

ը) փոշու, գազի արտանետումների և կեղտաջրերի աղտոտումից շրջակա միջավայրի պահպանումը՝ սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ու սահմանային թույլատրելի արտանետումների նորմերին համապատասխան.

թ) բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը:

Ռեկուլտիվացման ուղղությունն ընտրվում է N 1 աղյուսակի համաձայն:

6. Խախտված հողերը հնարավորինս պետք է ռեկուլտիվացվեն՝ որպես վարելահողեր և այլ գյուղատնտեսական հանդակներ:

Եթե հողերի ռեկուլտիվացումը նպատանահարմար չէ իրականացնել գյուղատնտեսական ուղղությամբ, ապա այն պետք է իրականացվի անտառապատման կամ բնապահպանական կամ հանգստի ուղղություններով՝ համաձայն N 1 աղյուսակի:

7. Լեռնային աշխատանքների իրականացման տեխնոլոգիական սխեմաները պետք է նախատեսեն՝

ա) լցակույտերի վերին շերտերի ձևավորում՝ կենսաբանական ռեկուլտիվացման համար պիտանի ապարներից.

բ) հողի բերրի շերտի հանում և տեղափոխում, պահեստավորում և պահում կամ ռեկուլտիվացվող տարածքի վրա բերրի շերտի փռում.

գ) հնարավոր բերրի ապարների ընտրողական (սելեկցիոն) մշակում և լցակույտագոյացում՝ լցակույտերում թունավոր և ռեկուլտիվացման համար ոչ պիտանի այլ կենսաբանական ապարների առկայության դեպքում.

դ) չայրվող, կայուն և լավագույն կառուցվածքով ու կազմությամբ լցակույտերի ձևավորում՝ հանքահորերի, հանքերի և արդյունաբերական կազմակերպությունների թափոններից.

ե) հիդրոմեքենայացման միջոցներով ձևավորված լցակույտերի ցամաքեցում:

8. Ապարների արտաքին լցակույտերը, պոչամբարները, մոխրի և խարամակուտակիչ արդյունաբերական այլ ապարները պետք է տեղադրվեն առավել անպիտան հողերի վրա (օգտագործված հանքերում, ձորակներում, հեղեղատներում և այլն)՝ համապատասխան սանիտարական նորմերի և կանոնների պահպանմամբ, հաշվի առնելով տեղանքի ռելիեֆն ու քամիների (գերիշխող) ուղղությունը, գետերի ու ջրերի հոսքերը, բնակավայրերի ու արդյունաբերական կազմակերպությունների տեղադիրքը և դրանց համար սահմանված սանիտարական գոտիները:

Լցակույտերի բարձրությունը և թեքությունների (շեպերի) անկյունները հաշվարկվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ հաշվի առնելով բաղադրիչ ապարների կայունությունն ու դրանց օգտագործման մակերեսը:

Ռեկուլտիվացված տեղամասերի ռելիեֆն ու ձևը պետք է ապահովեն դրանց տնտեսապես արդյունավետ օգտագործումը:

9. Հողի մակերևութից բարձր արտաքին և ներքին լցակույտերի ձևավորման ժամանակ շրջակա միջավայրի վրա ապարների հողմամաշման բացասական ազդեցության նվազեցման նպատակով լցակույտերի եզրագծով և թեքությունների (շեպերի) վրա պետք է տնկվեն արագ աճող ծառատեսակներ և այլ բուսականություն:

10. Խախտված հողերը պետք է ռեկուլտիվացվեն երկու՝ իրար հաջորդող տեխնիկական և կենսաբանական փուլերով:

11. Հողերի ռեկուլտիվացման տեխնիկական փուլի իրականացման ժամանակ, կախված հողերի ռեկուլտիվացման ուղղությունից, պետք է իրականացվեն հետևյալ հիմնական աշխատանքները՝

ա) լցակույտերի մակերեսի կոպիտ և մաքուր հաղթեցում, ջրառքերիչների, ջրա-

տարների ու լեռնային ջրանցքների լցում, թեքությունների հարթեցում կամ դարավանդավորում, հանքահորերի փլվածքների լցում և հարթեցում.

բ) ռեկուլտիվացվող մակերեսից ապարների խոշոր չափեր ունեցող բեկորների, արդյունաբերական կոնստրուկցիաների ու շինարարական աղբի հեռացում՝ դրանց հետագա թաղման կամ պահեստավորման պայմանով.

գ) ռեկուլտիվացվող տեղամասերում ճանապարհների և ուղիների կառուցում՝ հաշվի առնելով գյուղատնտեսական, անտառային տնտեսության և այլ տեխնիկայի տեղափոխման հնարավորությունը.

դ) ցամաքուրդային (դրենաժային) ու ջրահեռացնող ցանցի և այլ հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն՝ ըստ անհրաժեշտության.

ե) անբարտակների, պատվարների ու ջրաբերուկների տարալուծում կամ օգտագործում, տեխնածին լճերի ու վտակների լցում, գետերի հունների բարեկարգում.

զ) հանքերի հատակի և կողերի կառուցում, մնացորդային խրամների ձևավորում, թեքությունների (շեպերի) անրապնդում.

է) ռեկուլտիվացվող շերտի ստեղծում ու բարելավում, թունավոր ապարների ու աղտոտված հողերի՝ բերրի ապարների շերտով ծածկում, իսկ անհնարինության դեպքում՝ մելիորացում (հողաբարելավում).

ը) էկրանավորող շերտի ստեղծում՝ ըստ անհրաժեշտության.

թ) մակերեսի ծածկում՝ հնարավոր բերրի և (կամ) բերրի հողի շերտով.

ժ) տարածքի հակաէրոզիոն շերտի կազմավորում:

12. Լեռնահարթեցման աշխատանքների իրականացման ժամանակ հողերի մաքուր հարթեցումը պետք է իրականացվի գրունտի վրա ցածր տեսակարար ճնշմամբ մեքենաներով, որպեսզի նվազեցվի ռեկուլտիվացվող շերտի մակերեսի գերխտացումը:

Բույսերի արմատային համակարգի զարգացմանը նպաստող պայմաններ ստեղծելու նպատակով՝ տեղամասի նախապատրաստման ժամանակ պետք է իրականացվի խտացված հորիզոնի խոր և ոչ լցակույտային փխրեցում:

13. Համալիր բոլոր աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացվող հողերը և դրանց հարող տարածքները պետք է ունենան լավագույն (օպտիմալ) կազմավորված և էկոլոգիապես հավասարակշռված կայուն լանդշաֆտ:

14. Ռեկուլտիվացման կենսաբանական փուլի իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվեն հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ ռեկուլտիվացման ուղղությունների օգտագործման:

Կենսաբանական փուլը պետք է իրականացվի տեխնիկական փուլի ավարտից հետո:

Գյուղատնտեսական և անտառապատման նպատակներով հողերի կենսաբանական ռեկուլտիվացման ընթացքում այդ հողատարածքները պետք է անցնեն մելիորատիվ նախապատրաստման փուլ:

**IV. ԲԱՑ ԵՂԱՆԱԿՈՎ ԼԵՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՀՏԵՎԱՆՔՈՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՄՍԻՎԱՑՄԱՆԸ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

15. Բաց եղանակով լեռնային աշխատանքների դեպքում ռեկուլտիվացման ենթակա են ներքին և արտաքին լցակույտերը, հանքային փորվածքները և այլ լեռնային աշխատանքների հետևանքով խախտված տարածքները:

16. Լցակույտերի և հանքային փորվածքների ռեկուլտիվացման ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ պահանջները՝

ա) հողի բերրի շերտի նախնական հանում և պահեստավորում, հնարավոր բերրի մակաբացման ապարների ընտրողական մշակում՝ ռեկուլտիվացվող շերտի ստեղծման

համար անհրաժեշտ ծավալներով և համապատասխան պարամետրերով.

բ) լցակույտերի և հանքային փորվածքների ստեղծում՝ հաշվի առնելով ռեկուլտիվացման և ռեկուլտիվացվող մակերեսները և դրանց նպատակային նշանակությամբ օգտագործման համար արագ վերադարձը.

գ) սողանքների և փլվածքների նկատմամբ կայուն լցակույտերի և հանքային փորվածքների ձևավորում.

դ) անձրևաջրերի և տեխնիկական ջրերի (հոսքաջրերի) հեռացման միջոցառումների իրականացում՝ հատուկ հիդրոտեխնիկական շինությունների կառուցման եղանակով.

ե) լցակույտերից թունավոր նյութեր պարունակող ջրերի մաքրում կամ անվտանգ հեռացում.

զ) անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ ունեցող ապարներով ռեկուլտիվացվող շերտում ջրային ռեժիմի կարգավորման միջոցառումների ապահովում.

է) ինքնաբոցավառումը բացառող տեխնոլոգիական եղանակներով այրման ենթակա ապարներից լցակույտերի ձևավորում:

17. Ներքին լցակույտերի մակերևույթի նվազագույն միջերը պետք է լինեն ստորերկրյա ջրերի կանխատեսվող մակարդակից բարձր:

## **V. ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱՆՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

18. Ստորգետնյա եղանակով օգտակար հանածոների արդյունահանման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) երկրի մակերևույթի պահպանվածության և հողատարածքների նվազագույն ձևափոխման (դեֆորմացիա) ապահովում.

բ) հանքահորային լցակույտերի տեղադրման համար նախատեսված և ձևափոխման ենթակա հողատարածքներից հողի բերրի շերտի հանում.

գ) ճկվածքների մակերեսների հարթեցում, լեռնային ապարով փլվածքների լցում՝ հետագա հարթեցմամբ և հողի բերրի շերտով ծածկմամբ.

դ) հանքավայրերի նախնական չորացման նպատակով հորատանցքերից և լեռնային փորվածքներից դուրս մղվող ջրի հեռացում: Ջրահեռացումը պետք է կատարվի այնպես, որպեսզի ջրահեռացնող և այլ հաղորդակցման ուղիները չխանգարեն գյուղատնտեսական և այլ տեխնիկայի աշխատանքներին ու չվատթարացնեն հողի մելիորատիվ վիճակը.

ե) նոր ստեղծվող հանքահորային լցակույտերի տեղադրում, դրանց կազմավորում և ռեկուլտիվացում՝ հաշվի առնելով սույն տեխնիկական կանոնակարգի 8-րդ և 16-րդ կետերի պահանջները.

զ) հանքահորային լցակույտերի կենսաբանական ռեկուլտիվացման նախապատրաստման ժամանակ թեքությունների հարթեցում կամ դարավանդավորում՝ հաշվի առնելով կանաչապատման և պահպանման (խնամքի) աշխատանքների իրականացման հնարավորությունը.

է) հանքահորերի ճկվածքներում կամ փլվածքներում ջրանբարների ստեղծում՝ սույն տեխնիկական կանոնակարգի 33-րդ կետի պահանջներին համապատասխան:

19. Կանաչապատման ժամանակ ծառաթփային բույսերի և խոտերի տեսակների ընտրությունը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հանքահորային ապարների լցակույտերի մակերեսային շերտի քիմիական և ֆիզիկական հողմախարման աստիճանը:

**VI. ՏՈՐՖԻ ԱՐԴՅՈՒՆԱԳԱՆՄԱՆ ԴԵՏԵՎԱՆՔՈՎ  
ԽԱՆՏՎԱԾ ԳՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՆԿՎԻԶԻՏՄԱՆԸ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

20. Մշակված տորֆակուտակների խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) մշակված տորֆակուտակների ռեկուլտիվացում՝ անմիջապես շահագործման ավարտից հետո.

բ) հարթեցում և մակերեսի մաքրում՝ փայտից և կոճղերից.

գ) ֆրեզերային եղանակով մշակման արդյունքում գոյացած փորվածքների ու կտրվածքների եզրագծերի հարթեցում.

դ) տորֆի արդյունահանման ընթացում օգտագործվող չորացնող հիդրոտեխնիկական կառույցների և ջրահեռացնող ցանցի սարքին վիճակի ապահովում.

ե) ֆրեզերային եղանակով մշակված, մասնավորապես, գյուղատնտեսական մշակաբույսերի տակ գտնվող տորֆակուտակների յուրացում.

զ) գյուղատնտեսության համար ոչ պիտանի՝ մշակված տորֆակուտակների վրա անտառատնկարկների, տարբեր նշանակության ջրային համակարգերի և որսորդական տնտեսությունների ստեղծում.

է) հակահրդեհային միջոցառումների իրականացում:

21. Մշակված տորֆակուտակների հանքերում պետք է ստեղծվեն ջրային համակարգեր՝ սույն տեխնիկական կանոնակարգի 33-րդ կետով սահմանված պահանջների համաձայն:

**VII. ԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՈՒ ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ, ԵՐԿՐԱՔԱՆԱԳԵՏԱՆՈՒԶԱԿԱՆ, ԴԵՏԱԶՈՏՍԱԿԱՆ  
ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՏԵՎԱՆՔՈՎ ԽԱՆՏՎԱԾ ԳՈՂԵՐԻ  
ՌԵԿՈՒՆԿՎԻԶԻՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

22. Գծային կառույցների շինարարության, վերակառուցման և շահագործման ժամանակ պետք է ռեկուլտիվացվեն խողովակաշարերի ուղեգծերը, մերձուղեգծային խրամները, կողմնատարները, հողակույտերը:

23. Գյուղատնտեսական հողատեսքերով և անտառատնկարկներով զբաղեցված հողատարածքներում ռեկուլտիվացման աշխատանքները պետք է ներառվեն գծային կառույցների շինարարության կամ վերակառուցման շինարարական և հավաքակցման (մոնտաժման) աշխատանքների ընդհանուր համալիրում՝ ապահովվելով հողի բերրիության վերականգնումը:

24. Նախքան մայրուղային խողովակաշարերի, տրանսպորտային ուղիների և ջրանցքների շինարարությունն սկսելը հողի բերրի շերտը պետք է հանվի և պահվի շինարարության մոտակայքում նախատեսված ժամանակավոր լցակույտում՝ աշխատանքների ավարտից հետո ռեկուլտիվացման համար օգտագործելու նպատակով:

25. Գծային կառույցների շինարարության ժամանակ հողի ռեկուլտիվացման տեխնիկական փուլում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա) բոլոր ժամանակավոր սարքավորումների ու շինարարական աղբի հավաքում և շինարարական հրապարակից դրանց դուրսբերում.

բ) խողովակաշարերի խրամների լցում (գլանակներով)՝ գրունտի խտացումից հետո մակերեսի հարթեցումն ապահովելու նպատակով.

գ) ռեկուլտիվացվող մակերեսին մնացած գրունտի հավասար շերտով տարածում կամ տեղափոխում՝ դրանց համար նախագծով նախատեսված տեղադրման վայրեր.

դ) էրոզիոն պրոցեսների կանխարգելման միջոցառումների իրականացում.

ե) ռեկուլտիվացվող մակերեսի հողի բերրի շերտով ծածկում

26. Անտառատնկարկներով զբաղեցված հողերի վրա մայրուղային խողովակաշարերի շինարարության ժամանակ ռեկուլտիվացումը ներառում է փոսերի և խրամների լցումը, հատկացման գոտու ընդհանուր հարթեցում՝ շինարարական աղբի հեռացմամբ, մակերևույթի ճնապատումը: Արգելվում է հատկացման գոտում ծառաթփային բուսակազմության վերականգնումը, եթե այն կխանգարի մայրուղային խողովակաշարերի բնականոն շահագործմանը:

27. Հողօգտագործողների կողմից ստորգետնյա խողովակաշարերի և նավթի ու գազի պահեստարանների վրա գտնվող հողերը, ինչպես նաև դրանց պահպանման գոտիների հողերը պետք է ռեկուլտիվացվեն այդ կառույցները տնօրինող կամ շահագործող կազմակերպությունների համաձայնությամբ և այդ կառույցների անվտանգությունն ապահովելու նպատակով՝ նաև նրանց հսկողությամբ:

28. Երկրաբանահետախուզական, հետազոտական աշխատանքների և շահագործական հորատանցքերի հորատման դեպքում խախտվող հողերի վրա գտնվող հողի բերրի շերտը հանվում, պահեստավորվում և պահպանվում է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, իսկ օգտագործված լվացող հեղուկները և ստացված նավթի ու կոնդենսատի առաջին մնուշները պահվում են այդ նպատակով ստեղծված պահոցներում (տարողություններում): Հողի մակերևույթում տեղադրված պահոցները (տարողությունները) պետք է լինեն էկրանավորված:

29. Երկրաբանահետախուզական, հետազոտական և շահագործական աշխատանքների ավարտից հետո պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները՝

ա) հորատանցքերն ամրացնող կառույցների, շինարարական աղբի և հորատման ընթացքում օգտագործվող նյութերի հեռացում:

բ) պահոցների (տարողությունների) լցում և մակերեսի հարթեցում:

գ) անհրաժեշտ մելիորատիվ և հակաերոզիոն աշխատանքների կատարում:

դ) հողի բերրի շերտով մակերեսի ծածկում:

30. Նավթով, նավթամթերքներով և նավթարդյունաբերական կեղտաջրերով աղտոտված հողերի ռեկուլտիվացման ժամանակ պետք է իրականացվեն բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված նավթամթերքների արագ հեռացմանը և աղակալման ու աղուտավորման վերացմանը:

#### **VIII. ՀՈՂԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ԵՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐՆ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

31. Գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) խախտված հողերի տարածքների կազմավորում՝ օգտագործման համար հարմար ռելիեֆով, ձևերով, չափերով և դրանց մակերեսային շերտի կենսաբանական ռեկուլտիվացման համար պիտանի ապարների կազմով:

բ) խախտված հողերի հարթեցում՝ հաշվի առնելով գյուղատնտեսական տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովումը և բացառելով սողանքների ու երոզիոն պրոցեսների զարգացումը:

գ) հողի բերրի շերտի բացակայության կամ անբավարար առկայության դեպքում հնարավոր (պոտենցիալ) բերրի ապարների օգտագործում՝ հատուկ ագրոտեխնիկական միջոցառումների կիրառմամբ:

դ) որպես վարելահողեր օգտագործման համար հողերի բերրի շերտի սակավության դեպքում՝ քիչ պիտանի ապարների վրա հողի բերրի շերտի փռում:

ե) ռեկուլտիվացված հողատարածքների վերանորոգում:

զ) արմատային համակարգի համար բարենպաստ հողաշերտի ձևավորում կամ վե-

րականգնում՝ մելիորատիվ միջոցառումների իրականացմամբ (միանյա կամ բազմանյա հացազգի կամ լոբազգի մշակաբույսերի աճեցման միջոցով) և ազրոքիմիական, ազրոտեխնիկական, ինժեներային և հակաէրոզիոն միջոցառումներ իրականացնելիս՝ օրգանական նյութերով հողաշերտի հարստացում:

Գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար հողերի ռեկուլտիվացման դեպքում պետք է առկա լինեն Հայաստանի Հանրապետության լիազոր պետական մարմինների եզրակացությունները՝ մարդկանց և կենդանիների համար բույսերի միջոցով թունավոր նյութերի տեղափոխման վտանգավորության ցուցանիշի բացակայության մասին:

32. Անտառային հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) տնկարկների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հանգստի, պաշտպանիչ և ջրակարգավորիչ նշանակության անտառների հիմնում.

բ) լցակույտերի առափների (բերմանների) և թեքությունների (շեպերի) մակերեսի վրա անտառների ստեղծման համար ոչ թունավոր նյութերից մանրահողով ռեկուլտիվացվող շերտի ստեղծում.

գ) ելնելով լեռնային ապարների հատկություններից, ջրային ռեժիմի բնույթից և անտառատնկարկների տեսակից՝ ռեկուլտիվացվող շերտի հզորության և կազմի որոշում.

դ) էրոզիոն պրոցեսների զարգացումը բացառող և մեքենաների ու մեխանիզմների անխափան աշխատանքն ապահովող տարածքների հարթեցում.

ե) հողագրունտի անբարենպաստ պայմանների դեպքում՝ մելիորատիվ դեր կատարող անտառատնկարկների հիմնում.

զ) լեռնային ապարների դասակարգմանը, հիդրոերկրաբանական ռեժիմի բնույթին և այլ էկոլոգիական գործոններին համապատասխան՝ ծառաթփային բուսականության ընտրություն.

է) հակահողեհային միջոցառումների կազմակերպում:

33. Ջրային հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) հանքային փորվածքներում, խրամներում, հանքահորային դաշտերի ձևափոխված տեղամասերում՝ տարբեր նպատակներով օգտագործման համար ջրամբարների ստեղծում.

բ) ջրամբարների համալիր օգտագործում, մասնավորապես՝ ջրամատակարարման, ձկնաբուծության և ոռոգման նպատակով.

գ) թունավոր ապարների, ինքնաբոցավառման հակում ունեցող շերտերի, ջրամբարների հատակի ու ափերի, ջրի մակարդակից վերին կամ փոփոխական մակարդակի գոտիների էկրանավորում.

դ) հանքային փորվածքների ողողման և դրանցում ջրի մակարդակի պահպանման անհրաժեշտ համապատասխան հիդրոերկրաբանական կառույցների ստեղծում (շինարարություն).

ե) ջրամբարների թեքությունների (շեպերի) լվացումն ու սողանքները կանխարգելող միջոցառումների իրականացում.

զ) հնարավոր ֆիլտրումից հատակի ու ափերի պաշտպանում.

է) ջրամբարներ՝ թթու և հիմնային ստորերկրյա ջրերի ներթափանցումը կանխարգելող, ջրի կազմի ու բարենպաստ ռեժիմի պահպանումն ապահովող միջոցառումների իրականացում՝ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան.

ը) տարածքի թեքությունների (շեպերի) բարեկարգման և կանաչապատման միջոցառումների իրականացում:

34. Առողջարարական նպատակներով օգտագործման համար հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են.

ա) խախտված հողերի կոնսերվացման միջոցների ընտրություն՝ կախված խախտ-

ված հողերի վիճակից, կազմից և պարունակող ապարների հատկանիշներից, բնակլիմայական պայմաններից, տեխնիկատնտեսական ցուցանիշներից,

բ) խախտված հողերի կոնսերվացման ժամանակ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման միջոցառումների իրականացում,

գ) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունեցող և բավարար ջրակայունություն ու ջերմակայունություն ունեցող կապող նյութերի օգտագործմամբ խախտված հողերի մակերեսի ամրապնդում,

դ) կենսաբանական ռեկուլտիվացման համար ոչ պիտանի հիմնանյութից կազմված արդյունաբերական թափոնակույտերի մակերեսներին պոտենցիալ բերրի ապարներով էկրանավորող շերտի ստեղծում,

ե) մելիորատիվ աշխատանքների կատարում,

զ) տեխնիկական, կենսաբանական կամ քիմիական միջոցներով արդյունաբերական լցակույտերի ամրապնդում:

35. Հանգստի (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման համար հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներն են՝

ա) խախտված հողերի կոնսերվացման միջոցների ընտրություն՝ կախված խախտված հողերի վիճակից, կազմից և պարունակող ապարների հատկանիշներից, բնակլիմայական պայմաններից, տեխնիկատնտեսական ցուցանիշներից.

բ) խախտված հողերի կոնսերվացման ժամանակ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման միջոցառումների իրականացում.

գ) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունեցող և բավարար ջրակայունություն ու ջերմակայունություն ունեցող կապող նյութերի օգտագործմամբ խախտված հողերի մակերեսի ամրապնդում.

դ) կենսաբանական ռեկուլտիվացման համար ոչ պիտանի հիմնանյութից կազմված արդյունաբերական թափոնակույտերի մակերեսներին պոտենցիալ բերրի ապարներով էկրանավորող շերտի ստեղծում.

ե) մելիորատիվ աշխատանքների կատարում.

զ) տեխնիկական, կենսաբանական կամ քիմիական միջոցներով արդյունաբերական լցակույտերի ամրապնդում.

է) նվազագույն ծավալով հողային աշխատանքների կատարմամբ տարածքի ուղղածիզ հարթեցում՝ առկա կամ տեխնիկական փուլի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքում առաջացած ռելիեֆի ձևի պահպանմամբ.

ը) հանգստի և սպորտով զբաղվելու համար կառույցների շինարարության ժամանակ գրունտների կայունության ապահովում.

թ) բնակչության կազմակերպված հանգստի և լողալու համար ջրային օբյեկտների ռեկրեացիոն գոտիների նախագծում, շինարարություն և շահագործում՝ հաշվի առնելով նաև սույն տեխնիկական կանոնակարգի 32-րդ և 33-րդ կետերով սահմանված պահանջները:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Թոփուլյան**

**ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՌԵԿՈՒՆԻՏԻՎԱՑՄԱՆ ՌԻՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

Խախտված հողերի խմբերն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների	Ռեկուլտիվացված հողերի հետագա օգտագործումը
Գյուղատնտեսական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	Վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի և այլ հողատեսքերի հիմնման համար
Անտառապատման ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	ընդհանուր տնտեսական և դաշտապաշտպան նշանակության անտառատնկարկների, անտառատնկարանների հիմնման համար
Ջրային ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բնակչության խմելու ջրի, կենցաղային, գյուղատնտեսական, առողջարարական, բնապահպանական, արդյունաբերական, ջրատնտեսական, էներգետիկայի, պետության ու համայնքների կարիքների համար անհրաժեշտ ջրային համակարգերի ստեղծման կամ կառուցման համար
Համգստի ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	հանգստի, ֆիզիկական դաստիարակության և սպորտի գոտիների՝ պուրակների և անտառապուրակների ու որսորդական հանդակների հիմնման և ջրավազանների, լողավազանների, զբոսաշրջության բազանների և մարզահրապարակների ստեղծման համար
Բնապահպանական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բնապահպանական նշանակության և հակաէրոզիոն անտառատնկարկների ու ճնապատված տարածքների հիմնման համար
Առողջարարական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բուժական, առողջարարական վայրերի ու սանիտարական գոտիների հիմնման համար
Շինարարական ուղղությամբ ռեկուլտիվացվող հողեր	բնակավայրերի՝ ընդհանուր օգտագործման, արդյունաբերական, գծային, թափոնների ու մակաբացման ապարների լցակույտերի տեղադրման և այլ կառույցների շինարարական հրապարակների հիմնման համար

**ՌԵԿՈՒՐՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԱՍՏ ՏԵԽՆԱԾԻՆ ՌԵԼԻԵՖԻ ԵՎ ՀՆԱՐԱԿՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

1	2	3	4	5		7
				Ռելիեֆի մորֆոմետրիկ բնութագիրը	համաքանակների տիրամասերի բնութային անկյունը, (աստիճան)	
1	2	3	4	5	6	7
<b>Բաց լեռնային աշխատանքների ժամանակ խայտուկած հողեր</b>						
Հանքային փորվածքներ	փոստրակամարգային	տորֆային կուտակների հիդրոնեղանակով մշակում	հատակներ, փոստրակների միջև միջակապեր	5-10	30-ից ավելի	ձկնաբուծական ավազաններ, խոտհարքներ, անտառատնկարկներ ու բնապահպանական մշակության ճնապատված տարածքներ, որսորդական հանդակներ
	խրամամարգային	տորֆային կուտակների մեքենայացված եղանակով մշակում	փորվածքների հատակներ և թերություններ, փորվածքների միջև միջակապեր	1-5	45-ից ավելի	ջրավազաններ, բնապահպանական մշակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, որսորդական հանդակներ
	հայթեցված	տորֆային կուտակների ֆրեգերային եղանակով մշակում	հատակներ	1-5	-	վարելահողեր, խոտհարքներ, պրոտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ

1	2	3	4	5	6	7
Հանքային փորվածքներ	դարավանդավորված՝ շատ խոր և չափազանց խոր	օգտակար հանածոների մշակում՝ խորքային ձևի, (8-30%) բեքված կամ շեշտակի անկմամբ, արտաքին լցակույտեր՝ քափոնների տեղափոխմամբ	հանքաստիճանների կողեր, հատակներ, թեքություններ	100-ից ավելի	45-ից ավելի	ջրավորված՝ բազմանպատակային նշանակության ջրավազաններ, չոր՝ արդյունաբերական քափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ շեփերի ու բերմաների վրա՝ անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ծնապատված տարածքներ
	խոր	օգտակար հանածոների խորքային մշակում՝ թեքված կամ շեշտակի անկմամբ, արտաքին լցակույտեր՝ քափոնների տեղափոխմամբ	հանքաստիճանների կողեր, հատակներ, թեքություններ	30-100	45-ից ավելի	ջրավորված՝ բազմանպատակային նշանակության ջրավազաններ, չոր՝ արդյունաբերական քափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ, շեփերի ու բերմաների վրա՝ անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ծնապատված տարածքներ
	միջին խորությամբ	միջին հզորությամբ (վինչև 30 մ) հորիզոնական և սավալաթեք անկմամբ (8-10%) հրապարակային կուտակների մշակում 2-3 հանքաստիճանով. Սակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է:	հատակներ, հանքաստիճաններ	15-30	45-ից ավելի	ջրավորված՝ բազմանպատակային նշանակության և միաբուծական ջրավազաններ, չոր՝ արդյունաբերական քափոնների տեղադրման և շինարարական հրապարակներ, լանջերի վրա՝ խոտհարքներ, շեփերի վրա՝ անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ծնապատված տարածքներ, համգտի ու սպորտի գոտիներ

<p>1</p> <p>Համբային փորվածքներ</p>	<p>2</p> <p>փոտորակային՝ միջին խորությամբ</p>	<p>3</p> <p>միջին հզորությամբ (մինչև 30 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ հրապարակային կուտակների մշակում՝ մեկ համբաստիճանով: Մակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է:</p>	<p>4</p> <p>հատակներ, բեքություններ</p>	<p>5</p> <p>15-30</p>	<p>6</p> <p>45-ից ավելի</p>	<p>7</p> <p>ջրավորված՝ բազմամյա տակային նշանակության և ձկնաբուծական ջրավազաններ, չոր՝ արդյունաբերական բազիմների տեղադրման և շինարարական հրապարակների, լանջերի վրա՝ խոտհարքներ, շեփերի վրա՝ անտառատնկարկներ ու բնապահպանական նշանակության ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ</p>
<p>Համբային փորվածքներ</p>	<p>ոչ խոր</p>	<p>միջին հզորությամբ (մինչև 5-10 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ հրապարակային կուտակների մշակում՝ մեկ համբաստիճանով: Մակաբացումը բացակայում է կամ շատ փոքր հզորությամբ է:</p>	<p>հատակներ, բեքություններ</p>	<p>5-15</p>	<p>30-ից ավելի</p>	<p>ջրավորված՝ ոռոգման, ձկնաբուծական և ռեկրեացիոն նշանակության ջրավազաններ, չոր՝ խոտհարքներ, արտավայրեր, բազմամյա ծառատնկարկներ, ռեկրեացիոն նշանակության անտառատնկարկներ, բնապահպանական նշանակության ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, շինարարական հրապարակներ</p>
<p>Համբային փորվածքներ</p>	<p>ծորակատեսք</p>	<p>փոքր հզորությամբ (մինչև 5 մ) հորիզոնական և սակավաթեք անկմամբ հրապարակային կուտակների մշակում: Մակաբացումը բացակայում է:</p>	<p>հատակներ, բեքություններ</p>	<p>1,5-5,0</p>	<p>45-ից ավելի</p>	<p>ջրավորված՝ բնապահպանական և ձկնաբուծական նշանակության ջրավազաններ, արտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ</p>
<p>խորբային լեռնադարավանդափորված</p>	<p>ցանկացած հզորությամբ բարձրախորբային կամ մեծ անկմամբ օգտակար հանածոյի կուտակների մշակում՝ սակաբացման ապարներն արտաքին լցակուտեր տեղափոխելով</p>	<p>համբաստիճանների կողեր, հատակներ</p>	<p>լեռնային մասը՝ 15-ից ավելի, խորբային մասը՝ 15-ից ավելի</p>	<p>45-ից ավելի</p>	<p>խորբային մասում՝ բնապահպանական և ռեկրեացիոն նշանակության ջրավազաններ, լեռնային մասում՝ բազմամյա տնկարկներ, բնապահպանական և ռեկրեացիոն նշանակության անտառատնկարկներ</p>	

1	2	3	4	5	6	7
Ներքին լցակույ- տեր	լեռնային դարավանդա- վորված	ցանկացած հզորությամբ բարձրադիր տեսակի մի քանի հանքաստիճանով օգտակար հանածոյի կուտակների մշակում՝ մակաբացման ապարները արտաքին լցակույտեր տեղափոխելով	հանքաստիճան- ներ	30-ից ավելի	45-ից ավելի	բազմաշա տնկարկներ, բնապահպանակված և ռեկրեացիոն նշանակությամբ անտառատնկարկներ
Ներքին լցակույ- տեր	բարձրա- վանդակաձև՝ քնակաճ մակերեսի մակերևութին մոտիկ	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոյի խորքային տեսակի փոքր (մինչև 20 մ) հզորությամբ կուտակների մշակման ժամանակ լցակույտերի բափում: Մակաբացման հզորությունը՝ մինչև 30 մ	բարձրա- վանդակ	0-5	25-35	բարձրավանդակների վրա՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմաճյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ, լանջերի վրա՝ բնապահպանակված նշանակության անտառատնկարկներ ու ճնապատված տարածքներ, համգատի և սպորտի գոտիներ
	բարձրա- վանդակաձև դարավան- դավորված	տրանսպորտային համակարգերով օգտակար հանածոյի խորքային տեսակի կուտակների մշակման ժամանակ մի քանի շարահարկերով լցա- կույտերի բափում Մակաբացման հզորությունը՝ 40 մ-ից ավելի	բարձրա- վանդակներ, շարահարկերի աշխա- տանքային կտրեր	5-15	45-ից ավելի	բարձրավանդակների վրա՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմաճյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ, լանջերի և դարավանդակների վրա՝ բնապահպանակված նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, համգատի և սպորտի գոտիներ

1 Ներքին լրակույ- տեր	2 կատարածն	3 նակաբացման ապարների տեղափոխում՝ էքսկավատորներով	4 կատարման համակարգ	5 զագաթների բաղձրու- թյունը՝ մինչև 15	6 30-45	7 բարձրավանդակների վրա հարթեցումից հետո՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, բնապահպանական նշանա- կության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ
Արտաքին լրակույ- տեր	բարձրա- վանդակաձև՝ միջին բարձրությամբ	տրանսպորտային համակարգերով օգտակար համաժողի մեկ շարահարկային լրակույտերի ձևավորումը՝ ներառելով հիդրոլցակույտառաջա- ցումը	բարձրավան- դակներ, թեքություններ	15-30	25-30	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո՝ վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա՝ բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ
Արտաքին լրակույ- տեր	միջին բարձրությամբ բարձրավան- դակաձև և դարա- վանդակոր	տրանսպորտային համակարգերով օգտակար համաժողների մշակման ժամանակ երկշարահարկ լրակույտերի թափում	բարձրավան- դակներ, թեքություն- ներով դարավանդակ- ներ	30-50	մինչև 45	բարձրավանդակների վրա հարթեցումից հետո՝ վարելահողեր, խոտհարքներ, բազմամյա տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա՝ բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ

1	2	3	4	5	6	7
	բարձր և շատ բարձր	տրանսպորտային համակարգերով օգտակար համաժողովրդական մշակման ժամանակ բազմաշարահարկ լցակույտերի թափում	բարձրակարգ հաստիքներ, բեքուժներ, դարակամուրներ	50-100	մինչև 45	բարձրակարգ մեքենաների և փոխարկերի վրա՝ խոտհարքեր, բազմաշարահարկ տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա՝ բնապահպանական նշանակության անտառատնկարկներ, ծնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ
Արտաքին լցակույտեր	կատարած	ոչ տրանսպորտային համակարգերով օգտակար համաժողովրդական մշակման ժամանակ կողային լցակույտերի թափում	կատարների համակարգ, բեքուժներ	մինչև 30	մինչև 45	խոտհարքեր, բազմաշարահարկ տնկարկներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ծնապատված տարածքներ
	կատարած, դարակամ- դավորված լանջերով	լցակույտ առաջացնող մեքենաներով բազմաշարահարկ լցակույտերում վերին շարահարկի թափում	բարձրամասով կատարների համակարգ, բեքուժներ, դարակամուրներ	30-100	մինչև 45	բարձրակարգ մեքենաների և փոխարկերի վրա՝ խոտհարքեր, բազմաշարահարկ տնկարկներ, բոլոր տեսակի անտառատնկարկներ, լանջերի վրա՝ բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ծնապատված տարածքներ
Փյուններ	օղակած	կտրուկ անկում ունեցող (45° բարձր), փլվող տանիքներով ապարային գանգաձի (շտուկ) կուտակների մշակում	բեքուժներ	5-15	45-ից ավելի	բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ծնապատված տարածքներ՝ լցունից հետո

1	2	3	4	5	6	7
	կանյոնաձև	կտորուկ անկյուն ունեցող՝ միջին և մեծ հզորությամբ (1.5 մ ավելի) շերտային կուտակների մշակում	թեքություններ	5-15	30-ից ավելի	բնապահպանական մշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ՝ Լցումից հետո
Փլվածքներ	փոստրակային	հորիզոնական կամ զառիկող (մինչև 27°) տեղադրված շերտային կուտակների մշակում	թեքություններ, հատակներ	1 5-5 0	5-15	բնապահպանական մշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ
Փլվածքներ	դարավանդակավորված	զառիկող շերտային համաքակտակների մշակում՝ բնական մակերեսի թեք ռելիեֆի դեպքում	դարավանդակներ	չի որոշվում	30-ից ավելի	բնապահպանական մշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ
Ճկվածքներ	գոգավորված	փոքր և միջին հզորությամբ՝ հորիզոնական և ավիթավոր տեղադրված զառիկող շերտային համաքակտակների մշակում՝ տանիքի փլվածքով	թեքություններ, հատակներ	մինչև 1 5	5-15	վաղելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ, ինքնաաճման տարածքներ
Լցակույտեր	բարձրավանդակաձև	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ միաշարք ապարային Լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքություններ	մինչև 30	մինչև 45	բնապահպանական մշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, շինարարական իրապարակներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
	բարձրավանդակաձև դարավանդակվորված միջին հզորությամբ	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ երկշարք ապարային Լցակույտերի թափում	բարձրավանդակներ, թեքություններ	15-30	մինչև 45	բնապահպանական մշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգստի և սպորտի գոտիներ, շինարարական իրապարակներ, տեխնիկական միջոցներով ամրակապում

1	2	3	4	5	6	7
	բարձրական դասան ռարական վորված բարձր հզորությամբ կատարածն	ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ բազմաշարք ապարային լցակայանների բախում ճապանուղու օգտագործմամբ ապարային լցակայանների բախում	բարձրական դասներ, բեքույունների դասներ կատարների համակարգ, բեքույուններ	30-100	մինչև 45	բնապահական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
	կրճածն	սկիաբերի կամ վազոնիկների օգտագործմամբ ապարային լցակայանների բախում	բեքույուններ	30-ից ավելի	մինչև 45	բնապահական նշանակության անտառատնկարկներ, ճնապատված տարածքներ, հանգուտի և սպորտի գուղիներ, տեխնիկական միջոցներով ամրակապում
<b>Ցափոնների կահեատակործան հետևանքով խախտված հորեր</b>						
Լցակայաններ	բարձրական դաս	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման բափոնների տեղադրում՝ միաշարք լցակայանառաջացման ժամանակ	բարձրական դասներ	մինչև 15	մինչև 35	խտուհաղբներ, բնապահական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կրճեկապում
	բարձրական դաս վորված միջին բարձրությամբ	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման բափոնների տեղադրում՝ երկշարք լցակայանառաջացման ժամանակ	բարձրական դասներ, բեքույուններ	15-50	մինչև 35	խտուհաղբներ, բնապահական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կրճեկապում

1	2	3	4	5	6	7
	բարձր	տրանսպորտային միջոցների օգտագործմամբ մոխրի, խարամի և հարստացման թափոնների տեղադրում բազմաշարք լցակայանառաջացման ժամանակ	բարձրակարգակներ, թեքություններ	50-ից ավելի	մինչև 35	խտոհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոմերվացում
	կատարած	օգտակար համաժողովների չոր հարստացման թափոնների տեղադրում՝ կախովի ճուղային ճանապարհի օգտագործմամբ	կատարների հանակարգեր, թեքություններ	մինչև 25	մինչև 50	խտոհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ, տեխնիկական միջոցներով կոմերվացում և անրակապում
	կոմաճ	օգտակար համաժողովների չոր հարստացման թափոնների տեղադրում՝ սկիպերի կամ շրջվող վագոնիկների օգտագործմամբ	թեքություններ	30-ից ավելի	30-60	խտոհարքներ, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ, համազտի և սպորտի գոտիներ, տեխնիկական միջոցներով կոմերվացում և անրակապում
<b>Չճային կառույցների շինարարության հետևանքով խախտված հողեր</b>						
Հողային փորվածքներ	պահուստներ	լեռնային ապարների կորզում՝ հողաթունք կառուցելու համար	հատակներ, թեքություններ	5-10	մինչև 45	ջրավորված՝ ձկնաբուծության ու ոռոգման համար, և բնապահպանական նշանակության ջրավազաններ, չոր՝ խտոհարքներ, վարելահողեր, բնապահպանական նշանակության անտառատնկարկներ և ճնապատված տարածքներ

1	2	3	4	5	6	7
	առուներ	ջրհորումուղ և ջրահեռացում ու կառույցների շինարարություն	թեքություններ	մինչև 5	30-ից ավելի	ջրավորված՝ բնապահպանական նշանակության ջրավազաններ, չոր՝ անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ծնապատված տարածքներ
Հողաբույսեր	պատնեշներ, հողակույտներ	հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն, փորվածքներից հեռացվող ավելորդ կոմախին ապարների պահեստավորում	թեքություններ	մինչև 15	30-ից ավելի	անտառատնկարկներ և բնապահպանական նշանակության ծնապատված տարածքներ

**Ջրավորվածության բնույթով խախտված հողերի խնամքորում**

խախտված հողերի խումբը	խոնավության բնույթը	խոնավության բնույթը որոշող հիմնական գործոնը	առանց հիդրոտեխնիկական և հիդրոտեխնիկական միջոցառումների խրամանագծան	ճշգրտագործում հիդրոտեխնիկական միջոցառումների իրականացումը
1	2	3	4	5
Հանքային և հողային փորվածքներ	չոր	ստորերկրյա ջրերի խորքային (փորվածքի հատակի համեմատ) տեղակայում, ապարների բարձր անջրաթափանցելիություն, մթնոլորտային անբավարար խոնավություն	խոտհարքներ, վարելահողեր, բոլոր տեսակի անտառատնկարկներ, շինարարական հրապարակներ	բոլոր տեսակի օգտագործում բացի ջրավազաններից
	չափավոր խոնավ	ստորերկրյա ջրերի ոչ խորքային տեղակայում, մթնոլորտի բավարար խոնավություն, ապարների ոչ բարձր ջրաթափանցելիություն	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից	հիդրոտեխնիկատիպ և հիդրոտեխնիկական միջոցառումներ չեն պահանջվում

1	2	3	4	5
	զերիխումավ	ստորերկրյա ջրերի մուտիկ (կորվածքի հատակի համեմատ) տեղակայում կամ մթնոլորտային տեղումների նշանակալի քանակ և ապարների ցածր ջրաթափանցելիություն	խոտհարքեր, անտառատնկարվներ և բնապահպանական նշանակության ճնապատված տարածքներ	բոլոր տեսակի օգտագործում
	ջրափորված	ապարների ցածր ջրաթափանցելիության դեպքում ստորերկրյա ջրերի սեպասպարում և մակերեսային ջրերի ներհոսք՝ բաց ջրավազանի գոյացմանը	բնապահպանական նշանակության ջրավազաններ	բազմանպատակային նշանակության ջրավազաններ
Լցակայաներ և հողաթմբեր	չոր	մթնոլորտային տեղումների անբավարար քանակ, ապարների բարձր ջրաթափանցելիություն, ստորերկրյա ջրերի խոր (լցակայանի հատակի համեմատ) տեղակայում	խոտհարքեր, վարելահողեր, բոլոր տեսակի անտառատնկարվներ, շինարարական հրապարակներ	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից
	չափավոր խոնավ	մթնոլորտի բավարար խոնավություն, ապարների ոչ բարձր ջրաթափանցելիություն, ստորերկրյա ջրերի ոչ խոր տեղակայում	բոլոր տեսակի օգտագործում՝ բացի ջրավազաններից	հիդրոմելիորատիկ և հիդրոտեխնիկական միջոցառումներ չեն պահանջվում
	զերիխումավ	ապարների ցածր թափանցելիություն, մթնոլորտային տեղումների նշանակալի քանակ կամ ստորերկրյա ջրերի մուտիկ (լցակայանի հատակի համեմատ) տեղակայում	խոտհարքեր, բնապահպանական նշանակության անտառատնկարվներ և ճնապատված տարածքներ	բոլոր տեսակի օգտագործում





1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
<b>Ճիմիական կազմում</b> Ճիմ	կապակցված չցենսուսացված նստվածքային ապարներ	3 5- 5 5		չի որոշվում	3-18	չի որոշվում	10-75	10-ից ցածր	ապարների քիմիական հատկությունների բարելավումը և հատուկ միջոցառումներից հետո տարբեր նշանակության անոտատոմվարկների, խոտիսարքների և արտապլաների տակ, որոնք տապաստակ վարելահողի լանիտների տակ			
Ճիւղվածված հատկություններով և քիմիական կազմով	կապակցված չցենսուսացված նստվածքային ապարներ	5 5- 9 0	1 0- 2 0	0 4- 0 8	10- 20	30- 75	չի որոշվում	5- 20	չի որոշվում	10- 75	10-ից ցածր	ապարների քիմիական հատկությունների բարելավումը և հատուկ միջոցառումներից հետո տարբեր նշանակության անոտատոմվարկների, խոտիսարքների և արտապլաների տակ, որոնք տապաստակ վարելահողի տակ
Ճիւղվածված հատկություններով և քիմիական կազմով	արևայ կողմնակային չնստվածքային (կարկանդակային) ապարներ	3 5 9 0	1 0- 2 0	0 4- 0 8	10 20	30- 75	չի որոշվում	5- 20	արտադրողի կապակցում կազմով	5- 10- 0 ներսային	10-ից ցածր	միջոցառումներից և հատուկ արտապլաներով հետո տարբեր նշանակության անոտատոմվարկների, խոտիսարքների տակ, հավաքումից նպաստավոր խոտացում
Ճիւղվածված հատկություններով և քիմիական կազմով	կապակցված չցենսուսացված նստվածքային ապարներ	3 5- 9 0	1 0- 2 0	0 4- 0 8	10- 20	30- 75	չի որոշվում	5- 20	չի որոշվում	75-ից ավելի	10-ից ցածր	միջոցառումներից և հատուկ արտապլաներով հետո տարբեր նշանակության անոտատոմվարկների, խոտիսարքների տակ, հավաքումից նպաստավոր խոտացում

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
<p><b>Ոչ սխառմի՝</b></p> <p>Ֆիզիկական հատկություններով</p>	<p>դժվար հորմոնալորիտ ժայռոտ մազմառիկ մետաբոլիզմի ցեմենտացված նյութափոխանակումներ</p>	<p>մինչև 3 5</p>	<p>2.0-ից ավելի</p>	<p>0 8-ից ավելի</p>	<p>20-ից ավելի</p>	<p>7.5-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>18-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>տարբեր հատիկաչափական կազմի</p>	<p>չի որոշվում</p>	<p>Հարկավոր է ապահովել թույր բերել մակերեսի վրա կատարելագործել լեռնային աշխատանքների տեխնոլոգիան հաշվի առնելով ապարների բնույթը</p>
<p><b>Քիմիական կազմով՝</b></p> <p>Սուլֆիդներ պարունակող</p>	<p>կապագված և չկապագված չցեմենտացված նյութափոխանակումներ</p>	<p>մինչև 3 5</p>	<p>2.0-ից ավելի</p>	<p>0 8-ից ավելի</p>	<p>20-ից ավելի</p>	<p>7.5-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>18-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>տարբեր հատիկաչափական կազմի</p>	<p>չի որոշվում</p>	<p>Հարկավոր է ապահովել թույր բերել մակերեսի վրա կատարելագործել լեռնային աշխատանքների տեխնոլոգիան հաշվի առնելով ապարների բնույթը, հնարավոր բերրի ստեղծում, հնարավոր փոստի ապարներով փոստի տվյալ բնակիչապական պայմաններում բուսականության բնականորէ գարգացումը ապահովել շեղով հեշտությանը</p>
<p>Չեշտ տուժվող արդե, գիպ կարբոնատներ պարունակող</p>	<p>կապագված և չկապագված չցեմենտացված հորմոնալորիտ ապար</p>	<p>մինչև 3 5</p>	<p>2.0-ից ավելի</p>	<p>0 8-ից ավելի</p>	<p>20-ից ավելի</p>	<p>7.5-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>18-ից ավելի</p>	<p>չի որոշվում</p>	<p>տարբեր հատիկաչափական կազմի</p>	<p>չի որոշվում</p>	<p>Հարկավոր է ապահովել թույր բերել մակերեսի վրա կատարելագործել լեռնային աշխատանքների տեխնոլոգիան հաշվի առնելով ապարների բնույթը, հնարավոր բերրի ստեղծում, հնարավոր փոստի ապարներով փոստի տվյալ բնակիչապական պայմաններում բուսականության բնականորէ գարգացումը ապահովել շեղով հեշտությանը</p>

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
												<p>Սովորելի վրա ապարների առկայության դեպքում ամերիաճշտ է արձանագրված քիմիական մեկության ապարների թունավոր հատկությունները չզգրացնող էկրանի ատելծում հնարավոր բնորոշ ապարներով վերում տվյալ բնավիճակայական պայթաններում քրտավանության բնավանոն զարգացումն ապահովող շերտի հզորությունը</p>